

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածաշրջանի <<Այգեշատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,

2. բարձրագույն կրթությունը,

3. ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր) :

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,

2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,

3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,

4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),

5. հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),

6. աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2019թ. հունվարի 30-ից մինչև փետրվարի 28-ը ներառյալ, ամեն օր ժամը 10⁰⁰-ից մինչև 15⁰⁰-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից, Այգեշատի միջնակարգ դպրոցում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2019 թվականի մարտի 11-ին, ժամը 13⁰⁰-ին՝ Այգեշատի միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ Արմավիրի մարզ, Վաղարշապատի տարածաշրջան, գ. Այգեշատ, Մայիսյան 15:

Տեղեկությունների համար զանգահարել 093-55-56-21 հեռախոսահամարով:

ՀՀ Արմավիրի մարզի
<<Այգեշատի միջնակարգ դպրոց>>
ՊՈԱԿ կառավարման խորհուրդ